



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**Դատավորների թեկնածուների ցուցակի համալրման
որակավորման քննությունների դիտարկում**



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին տեղի ունեցան դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական, քրեական և վարչական մասնագիտացման բաժինների համալրման որակավորման ստուգումը:

ՀՀ Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 102-րդ հոդվածը նախատեսում է, որ որակավորման գրավոր քննությանը և հարցազրույցին, բացառությամբ Բարձրագույն դատական խորհրդի անդամների միջև հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկմանը, կարող են ներկա լինել և դրանց ընթացքին հետևել իրավունքի բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների մինչև երեք ներկայացուցիչ՝ ըստ դիմումների ներկայացման ժամանակագրական առաջնահերթության, յուրաքանչյուր հասարակական կազմակերպությունից՝ մեկ ներկայացուցիչ: Հիմք ընդունելով Օրենսգրքով սահմանված հնարավորությունը՝ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը դիտորդություն է իրականացրել որակավորման քննությունների ընթացքում:

2019թ. հոկտեմբեր 25-ին տեղի է ունեցել քաղաքացիական մասնագիտացման բաժնի որակավորման գրավոր քննությունը, իսկ հոկտեմբերի 26-ին՝ քրեական և վարչական մասնագիտացման բաժինների որակավորման գրավոր քննությունը:

Համաձայն Բարձրագույն դատական խորհրդի 21.08.2019թ-ի թիվ ԲԴԽ-58-Ո-127 որոշման՝ քաղաքացիական մասնագիտացման բաժինը անհրաժեշտ է համալրել 12 թեկնածուներով, քրեական մասնագիտացման բաժինը՝ 13, վարչական մասնագիտացման բաժինը՝ 2 թեկնածուներով¹:

Քննությունը անց է կացվել ՀՀ փաստաբանական դպրոցում՝ դրա համար հատկացված երկու լսարաններում:

Քննությանը մասնակցության հայտ ներկայացրել է 35 թեկնածու, քննության օրը ներկայացել է 34 թեկնածու:

Հոկտեմբերի 26-ին նույն վայրում տեղի է ունեցել քրեական և վարչական մասնագիտացման բաժնի որակավորման գրավոր քննությունները: Քննությանը մասնակցել են քրեական մասնագիտացմամբ 17 հայտ ներկայացրած հավակնորդից՝ 16-ը, վարչական մասնագիտացմամբ 13 հավակնորդից՝ 12-ը:

¹ <http://www.court.am/index.php?link=arm/right/candidat-announcement/02-09-2019.htm>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Քննության սկիզբ և քննական հարցի ընտրություն

Քննական հարցը դուրս է բերվել 2019թ. մարտի 11-ի ԲԴԽ-15-Ո-58 որոշման՝ որակավորման գրավոր քննության հարցերի մշակման կարգի համաձայն²:

Հարկ է նշել, որ ի տարբերություն նախորդ որակավորման քննությունների անցկացման գործընթացի³, հերթական քննության ժամանակ մի շարք տեխնիկական խնդիրներ և բացթողումներ, որոնք արձանագրվել և բարձրաձայնվել էին Կազմակերպության կողմից, հնարավորինս շտկվել էին:

Քննարկյալ հարցի ընտրությունն ու քննության սկիզբը տրվել է սահմանված կարգի համաձայն, այս առնչությամբ որևէ արտառոց հանգամանք չի արձանագրվել:

Սակայն, ինչպես նախորդ դիտարկման ժամանակ, քննարկվող քննությունների առնչությամբ կրկին պետք է արձանագրել, որ քննության առաջադրանքների չբացված օրինակները քննական հարցի ընտրությունից հետո չեն բացվել և ծրարի բովանդակությանը հասանելիություն չի եղել, ինչը թույլ չի տվել հավաստիանալ բացված և չբացված ծրարերի բովանդակության տարբերության մեջ:

Քննության տևողություն

Քննության տևողությունը սահմանված է եղել 6 ժամ: Քննական ժամանակի սկզբի և ավարտի կապակցությամբ խնդիրներ չեն արձանագրվել: Քննության 6 ժամը լրանալուց հետո բոլոր համակարգիչները արգելափակվել են և հնարավոր չի եղել գրավոր աշխատանքը շարունակել:

Քննական հանձնաժողով և արդյունքների ամփոփում

Բարձրագույն դատական խորհրդի՝ 2019 թվականի մարտի 11-ի թիվ ԲԴԽ-15-Ո-58 որոշմամբ սահմանված գնահատման հանձնաժողովի և քննական աշխատանքները ստուգելու և գնահատելու վերաբերյալ կարգի համաձայն՝ որակավորման գրավոր քննության (այսուհետ՝ Քննություն) աշխատանքները ստուգելու և գնահատելու նպատակով քննություն անցկացնելու օրը՝ քննության ավարտից անմիջապես հետո, Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ Օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-5-րդ կետերով սահմանված կարգով վիճակահանությամբ ձևավորվում է համապատասխան մասնագիտացում ունեցող գնահատման հանձնաժողով:

² <http://old.court.am/arm/top/bdx/decisions/2019/%D4%B2%D4%B4%D4%BD-15-%D5%88-58.pdf>

³ Դիտարկման արդյունքները հասանելի են հետևյալ հղումով՝

<http://prwb.am/new/wp-content/uploads/2019/06/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վիճակահանությունն անցկացվում է Բարձրագույն դատական խորհրդի դռնփակ նիստում՝ քննությունն ավարտվելու մասին Դատական դեպարտամենտի՝ Խորհրդի կողմից լիազորված ներկայացուցչի հաղորդումն ստանալուց հետո անհապաղ:

Կրկին պետք է արձանագրել, որ կարգը, չի սահմանում, թե ինչ չափանիշների հիման վրա են ընտրվում հանձնաժողովի անդամները, ինչպիսի մասնագիտական պահանջներ են ներկայացվում վերջիններին: Կարգի համաձայն՝ Գնահատման հանձնաժողովի աշխատանքն իրականացվում է գաղտնի և դռնփակ ընթացակարգով: Սակայն չի հստակեցվում, թե հանձնաժողովի աշխատանքն իրականացվում է անընդմեջ, թե ընդհատումներով: Նմանապես, դեռևս մտահոգիչ են գնահատման չափանիշների և սանդղակի վերաբերյալ առկա կարգավորումներն ու պրակտիկան, որին մանրամասն անդրադարձ կատարել ենք նախորդ դիտարկման արդյունքում⁴:

Հոկտեմբերի 29-ին ներկայացվել են դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացված որակավորման գրավոր քննության փուլի քաղաքացիական մասնագիտացման աշխատանքների արդյունքների ամփոփումն ու հրապարակումը: Համաձայն արդյունքների բանավոր հարցազրույցի փուլ անցել է 34 հավակնորդից 8-ը:

Հոկտեմբերի 31-ին ներկայացվել են քրեական և վարչական մասնագիտացման աշխատանքների արդյունքները: Վերջիններին համաձայն բանավոր հարցազրույցի փուլ են անցել քրեական մասնագիտացման 2, վարչական մասնագիտացման՝ 9 հավակնորդ:

Բանավոր հարցազրույցի անցկացման փուլ

2019 թվականի դեկտեմբերի 19-ին անց կացվեց քաղաքացիական և քրեական մասնագիտացումների դատավորների թեկնածուների հավակնորդների հարցազրույցի փուլը՝ հիմք ընդունելով Օրենսգրքի 102-րդ և 108-րդ հոդվածները: Դեկտեմբերի 20-ին անց է կացվել վարչական մասնագիտացման հավակնորդների հարցազրույցի փուլը⁵:

Այս փուլում ներգրավված էր նաև Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված կարգով ընտրված հոգեբան:

⁴ Ibid 3, էջեր 9-11

⁵ Հարցազրույցի երկրորդ օրվա ընթացքում ԲԴԽ անդամ Հայկ Հովհաննիսյանի կողմից 2 անգամ հղում է կատարվել Կազմակերպության նախորդ զեկույցին և կարծիք հնչեցվել դրա վերաբերյալ:

Կազմակերպությունը բարձր է գնահատում անդամի հետևողականությունն ու ակնկալում է զեկույցով բարձրացված խնդիրների վերաբերյալ նմանատիպ հետևողականություն:



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հարցազրույցների անցկացման վայրի և ժամի վերաբերյալ տեղեկությունը, Օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, հրապարակվել էր ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում⁶:

Հարցազրույցի փուլը անց էր կացվում հետևյալ փուլային հաջորդականությամբ՝

- ԲԴԽ անդամի կողմից հավակնորդի ինքնակենսագրականի ներկայացում, դրա առնչությամբ հարցուպատասխան՝ ըստ անհրաժեշտության
- Հոգեբանական թեստ
- Իրավիճակային խնդրի լուծում

Հոգեբանական թեստը հիմնվել է դատավորի պաշտոնում արդյունավետ գործունեության համար հավակնորդի անձնական հատկանիշների բացահայտմանն ուղղված 42 արժեքների վրա: Ըստ այդմ, հավակնորդից նախ պահանջվել է, արժեքներին ծանոթանալ, դրանցից յուրաքանչյուրը գնահատել 1-5 բալային սանդղակով՝ ըստ անձնական կարևորության:

Այնուհետև պահանջվել է թվարկել 10 առավել բարձր գնահատված արժեքները, և հետո դրանցից ընտրել հավակնորդի համար 5 ամենակարևոր արժեքները: Վերջում ներկայացվել են այդ 5 արժեքները և պահանջվել է դրանց վերաբերյալ ներկայացնել հնարավորինս պրակտիկ և սեփական փորձով ստացված տեղեկություն: Պետք է փաստել, որ լրացված թեստի վերաբերյալ հավակնորդը անձամբ հոգեբանից որևէ կարծիք-եզրակացություն չի ստացել:

Արժեքների ներկայացում-քննարկումից հետո Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից հավակնորդին ուղղվել են տարբեր հարցեր՝

- Որտե՞ղ եք ձեզ տեսնում 5-10 տարի հետո
- Որո՞նք են ձեր բնավորության թերի գծերը
- Ո՞ւմ հետ ճանապարհ կգնաք
- Եթե մեկ նվերի հնարավորություն ունենայիք, ծերանո՞ց, թե՞ մանկապարտեզ կտանեիք
- Ձեր կարծիքով ինչո՞ւ նախորդ քննությանը չեք անցել
- Ի՞նչ կփոխեք դատական համակարգում
- Վերջին կարդացած գիրքը՞
- և այլն

Հարցերի առնչությամբ կարիք կա նշելու, որ դրանց գնահատման չափանիշները կրկին հստակ չեն և անհասկանալի է ինչպես է տրված պատասխանների հիման վրա հավակնորդը գնահատվում:

⁶ <http://court.am/hy/official-inner/83>



ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Խորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքում քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների 8 հավակնորդներից անհրաժեշտ ձայներ ստացել են 7-ը, քրեական մասնագիտացման դատավորների թեկնածուների հավակնորդներից՝ 1-ը, վարչական մասնագիտացման դատավորների թեկնածուների հավակնորդներից՝ 2-ը:

Առաջարկություններ

- Սահմանել օբյեկտիվ չափանիշներ քննական հանձնաժողովների անդամների ընտրության համար,
- Քննական հանձնաժողովների անդամներին ընտրել ըստ վերջիններիս մասնագիտական կարողությունների ու հմտությունների,
- Քննական առաջադրանքների չբացված օրինակների հետագա ճակատագրի վերաբերյալ հարցերին տալ հստակ օրենսդրական կարգավորում,
- Նախատեսել որակավորման գրավոր քննության աշխատանքների գնահատման հստակ չափանիշներ և միավորների նվազեցման սանդղակ,
- Հարցազրույցի փուլում հոգեբանական թեստի արդյունքում հավակնորդին տրամադրել հոգեբանի կողմից կազմված կարծիք-եզրակացություն,
- Սահմանել Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից հնչեցվող հարցերի հիման վրա գնահատման որոշակի ու հավակնորդի համար կանխատեսելի չափանիշներ: